

Թիւ 1929  
Փետրուար 21, 1961

Առժանաշնորհ  
Տ. Ներսէս ԲՆՆՅ. Բարուրեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Միակօ.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Փետրուար 15 թուակիր Զեր նամակը, որով կը հաղորդէք թէ Զեր նախագահութեամբ գումարուած Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի անդամներու մասնակի ընտրութիւն, եւ կ'աւելցնէք թէ նկատի ունենալով կարգ մը դժուարութիւններ՝ յարմար տեսած էք ձեր կողմէ երկու հոգի աւելցնել Միական Խորհուրդի կազմին վրայ:

Հրահանգուած ենք Զեզի հաղորդելու հետեւեալը.

1. Միական Խորհուրդի անդամները կը ընտրուին ժողովին կողմէ եւ զազտնի քուէարկութեամբ:
2. Հոգեւոր հովիւը չի կրնար ի պաշտօնէ անդամներ նշանակել Միական Խորհուրդի կազմին վրայ: /Բացառեալ, երբ յարմար նկատուի որ Միական Խորհուրդի օժանդակ կամ խորհրդական նշանակուին, եւ այդ նշանակուածները չեն կրնար Միական Խորհուրդի ժողովին մէջ քուէ տալ /:
3. Զեր մասնակի ընտրութեան արդիւնքը հաղորդող նամակը պէտք է որ ստորագրուած ըլլայ նաեւ Միական Խորհուրդի եւ Միական ժողովի Ատենապետներուն եւ Ատենադպիրներուն կողմէ /Տեսնել Հարցարանը /:
4. Ներփակ Զեզի կը դրկենք զոյգ օրինակով "Միական Տեղեկագիրներու Հարցարան"ը: Հաճեցէք հարցումներուն պատասխանը լեցնել եւ ստորագրելով վերադարձնել Առաջնորդարան առաջին պատահութեամբ՝ պաշտօնազրկ մը հանդերձ:
5. Այս պայմանները լրացուելէն վերջ կը վաւերացուի Զեր ժիական ընտրութիւնը:

Մնամ խորին յարգանք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ